

Կազմված է « 22 » « 09 » 2019թ.
Բաղկացած է 11 (տասնմեկ) թերթից
Ընդամենը՝ 2 (երկու) օրինակ
Օրինակ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

<<Միասնական հայրենիք>>
կուսակցության 22.09.2019թ. կայացած
հիմնադիր համագումարի որոշմամբ
/թիվ 01 արձանագրություն/

Նախագահ՝  Ս. Բարայան

ԳՐԱՆՑՎԱԾ Է՝

ԱՀ արդարադատության նախարարության
աշխատակազմի իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի գործակալության
կենտրոնական մարմնի կողմից

Գրանցման ամսաթիվ՝ « 22 » « 10 » 2019թ

Գրանցման համար 443.172.1098546



Գործակալության պետ՝ Գ. Մաքսիմովա

<<ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ>>
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ք. Ստեփանակերտ, 2019թ.

1. Ընդհանուր դրույթներ

1.1. «Միասնական հայրենիք» կուսակցությունը (այսուհետ նաև՝ Կուսակցություն) անհատական անդամության վրա ստեղծված հասարակական միավորում է, որը կամավորության, իրավահավասարության և հրապարակայնության սկզբունքներով համախմբում է ԱՀ քաղաքացիների՝ պետության և հասարակության քաղաքական կյանքին մասնակցելու նպատակով:

1.2. Կուսակցությունը գործում է Արցախի Հանրապետության ողջ տարածքում՝ ԱՀ Սահմանադրությամբ, ԱՀ օրենսդրությամբ, ԱՀ միջազգային պայմանագրերով, «Կուսակցությունների մասին» ԱՀ օրենքով, վերջինիս համապատասխան ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.3. Կուսակցությունը կարող է ունենալ ներկայացուցչություններ այլ պետություններում:

1.4. Կուսակցությունն ունի տարածքային ստորաբաժանումներ Արցախի շրջաններում, այդ թվում՝ Ստեփանակերտում:

1.5. Կուսակցության տարածքային ստորաբաժանումները ստեղծվում և նրանց գործունեությունը կազմակերպվում է տարածքային հատկանիշներով:

1.6. Կուսակցությունը կարող է օրենքով սահմանված կարգով հիմնադրել զանգվածային լրատվական միջոցներ ու հրատարակչություններ:

1.7. Կուսակցությունն ունի դրոշ, որը սպիտակ է: Եզրերը երկու կողմից ունեն ծոպեր: Դրոշի մեջտեղի հատվածում պատկերված է Կուսակցության խորհրդանիշը:

1.8. Կուսակցությունը ունի խորհրդանիշ, որտեղ ամփոփված է Արցախը Մայր Հայաստանին վերամիավորելու գաղափարը, Հայաստան-Արցախ-Սփյուռք փոխկապակցվածությունն ու միասնականությունը եռագույն դրոշի՝ կարմիր, կապույտ և ծիրանագույն ճյուղերի տեսքով: Նկարի աջ մասում գրված է՝ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ:

1.9. Կուսակցությունը պետական գրանցման պահից ձեռք է բերում ոչ առևտրային իրավաբանական անձի կարգավիճակ: Կուսակցությունը ունի կլոր կնիք, որի փոքր շրջանի մեջ պատկերված է Կուսակցության խորհրդանիշը: Շրջանը գտնուողով է օղակով, որի մեջ երեք լեզուներով (հայերեն, ռուսերեն, անգլերեն) գրված է «ՄԻԱՄՆԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ»:

1.10. Կուսակցությունը կարող է ունենալ դրոշմակնիք, հաշվարկային և այլ հաշիվներ ԱՀ, ՀՀ բանկերում՝ դրամով ու արտարժույթով, և այլ ռեկվիզիտներ:

1.11. Կուսակցության անվանումն է՝
հայերեն՝ «Միասնական հայրենիք» կուսակցություն, (հապավումը՝ ՄՀաԿ),
ռուսերեն՝ партия «Единая Родина», (հապավումը՝ ПЕР),
անգլերեն՝ «Unified Homeland» Party, (հապավումը՝ UHP):

1.12. Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի գտնվելու վայրի հասցեն է. ԱՀ ք. Ստեփանակերտ, Վ.Մամիկոնյանի 19/10:

2. Կուսակցության գլխավոր նպատակը և խնդիրները

2.1. Կուսակցության գլխավոր նպատակն է ժողովրդավարական, իրավական, սոցիալական, բարգավաճ ու հզոր ազգային պետության կերտումը:

2.2. Կուսակցության խնդիրներն են.

- ազատական արժեքների քարոզչություն իրականացնելը,